VISA ՔԱՐՏԵՐՈՎ CINEMA STAR ԿԻՆՈԹԱՏՐՈՆՆԵՐՈՒՄ ԱՐՇԱՎԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Սույնով սահմանվում են «Ֆասթ Բանկ» ՓԲԸ կողմից (այսուհետ՝ Բանկ) **01.12.2025-28.02.2026թթ. ներառյալ Visa քարտապան (այսուհետ՝ Քարտ) հաճախորդների** (այսուհետ Հաճախորդ) համար առաջարկվող արշավի (այսուհետ՝ Արշավ) պայմանները:
2. Արշավն իրականացվում է Բանկի կողմից (հասցե՝ ք. Երևան, Նորք-Մարաշ, Գարեգին Հովսեփյան 32/6):
3. Արշավին կարող են մասնակցել Ֆասթ Բանկի **բոլոր Visa Քարտապան** Հաճախորդները՝ անկախ քարտի թողարկման և ձեռքբերման ժամկետից:
4. Արշավի շրջանակներում, Հաճախորդները Cinema Star կինոթատրոններում (Դալմա և Ռիո մոլեր) **Քարտով վճարված** հրապարակային ցուցադրության **ֆիլմի/մուլտֆիլմի յուրաքանչյուր 1 տոմսի դիմաց կարող են ստանալ նույն ֆիլմի/մուլտֆիլմի նույն սեանսի 1 տոմս նվեր**:
5. Արշավը գործում է բացառապես Cinema Star-ի Դալմա՝ ք. Երևան, Ծիծեռնակաբերդի 3, և Ռիո՝ ք. Երևան, Փափազյան 8 մոլերի կինոթատրոնների տոմսարկղերում և միայն Քարտով վճարման դեպքում:
6. **Արշավը չի գործում առցանց գնման, կանխիկ վճարման կամ այլ միջոցներով վճարման դեպքում:**
7. **Արշավը չի գործում հատուկ ցուցադրությունների, փակ կամ առանձնացված սրահներով միջոցառումների վրա**:
8. Բանկը պատասխանատվություն չի կրում Cinema Star-ի աշխատանքային ռեժիմի, ծրագրային կամ տեխնիկական խափանումների հետևանքով չիրականացված գործարքների կամ չտրամադրված նվեր տոմսերի համար: